«ԻՆՏԵՐԱԿՏԻՎ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ»
ՀԻՄՆԱԴՐԱՄ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ 2022

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Թեմա **ՌԱԶՄԱՀԱՅՐԵՆԱՍԻՐԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԴՊՐՈՑՈՒՄ**

Առարկա **ՆԶՊ**

Հեղինակ **Զոհրաբ Մկրտչյան**

Մարզ **Արագածոտն**

Ուսումնական հաստատություն **Երնջատափի Ե Չարենցի անվան միջն դպրոց**

Բովանդակություն

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ……3
ԳԼՈՒԽ 1. ՌԱԶՄԱՀԱՅՐԵՆԱՍԻՐԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ հիմնական խնդիրները ԴՊՐՈՑՈՒՄ ……5
1. Ռազմահայրենասիրական դաստիարակության բովանդակությունը և հիմնախնդիրները հիմնական դպրոցում
2. 1.2. ՀՀ և արտերկրի դպրոցներում ռազմահայրենասիրական դաստիարակության հիմնախնդիրների լուծմանն ուղղված աշխատանքների համեմատական վերլուծություն……15
ԳԼՈՒԽ 2.Հիմնական դպրոցում ռազմահայրենասիրական դաստիարակության հիմնախնդիրների լուծման մանկավարժական ուղիները……1**6**
ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ…….22
ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ……..23

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Թեմայի արդիականությունը: Հայաստանի Հանրապետության ռազմաքաղաքական իրավիճակից, աշխարհագրական դիրքից, հարևանների հետ ունեցած հարաբերություններից, այսօր առկա պատերազմական իրողությունից ելնելով դպրոցում ռազմահայրենասիրական դաստիարակությունը պետք է դիտարկել որպես անհրաժեշտություն: Դիտարկելով նշված պայմանները՝ պետք է ռազմահայրենասիրական խնդիրներին նոր լուծումներ և ուղիներ առաջադրել: Ռազմահայրենասիրական դաստիարակության նպատակը հոգեպես և ֆիզիկապես ամուր սերունդ դաստիարակելն է: Հենց դպրոցից է ձևավորվում գրագետ և հայրենասեր զինվորը, իսկ արդեն բանակում նա կատարելագործվում է և հղկվում:

Դպրոցում տարբեր առարկաների ուսումնասիրության ժամանակ (ՆԶՊ, հայոց պատմություն, հայ գրականություն հեպ) աշակերտները ձեռք են բերում գիտելիքներ, որոնք նպաստում են ազգային արժեքների նկատմամբ դրական վերաբերմունքի, հայրենասիրության ձևավորմանը: Երեխայի արժեհամակարգի ձևավորմանը նպաստում են նաև դպրոցում դասասենյակների համապատասխան կահավորումը, անհրաժեշտ ուսումնական իրերով համալրումը: Մեծ ներգործություն են ունենում սովորողների վրա նաև հաճախակի այցելությունները զորամասեր, զինվորական ուսումնական

հաստատություններ, հանդիպումները մարտական գործողությունների մասնակիցների հետ, ինչպես նաև մերօրյա հերոսների հետ, ովքեր զինվորական ծառայության ընթացքում օրինակելի վարք են դրսևորել, մեր իսկ աշակերտները 44 օրյա պատերազմի ժամանակ:

Ներկայիս հասարակության մեջ նկատվում է ազգայինի նկատմամբ անտարբերություն, ուստի շատ կարևոր է, որպեսզի հենց դպրոցից հիմք դրվի երեխայի մեջ հայրենասիրության սերմանմանը: Օտարածին բարքերը ևս մեծ մարտահրավեր են աճող սերնդի համար, կարևոր է, որ ապագա հայ զինվորը, նաև քաղաքացին իր գիտակցության մեջ ունենա բարձրագույն արժեքներ, ինչպիսիք են ազգասիրությունը, հայրենասիրությունը, ռազմահայրենասիրությունը:

Կայուն պետականություն ունենալու համար անհրաժեշտ է, որպեսզի պետության ներսում ապրի առողջ և ներդաշնակ ամենամեծ ինստիտուտը՝ ընտանիքը: Հայ ժողովրդի համար միշտ էլ առաջնային տեղում է եղել ռազմահայրենասիրական և քրիստոնեական դաստիարակությունը, որը նախ պետք է իրականացվի ընտանիքում, այնուհետև հիմնարար գիտելիքներ և ամբողջական ռազմահայրենասիրական դաստիարակություն պետք է ստանա դպրոցում: Այս թեմայի ուսումնասիրությամբ զբաղվել են շատ հայտնի մանկավարժներ, հոգեբաններ, ազգագրագետներ: Սովորողների դազմահայրենասիրական դաստիարակության ուղղություններից առաջնահերթը երիտասարդ սերնդի մեջ հայրենիքը պաշտպանելու պարտքի ձևավորումն է, կարգապահության. զինվորական բարձր կամքի, համարձակության, վճռականության ամրապնդումը: Սրտի ու մտքի կրակով պետք է խոսվի հայրենիքի մասին՝ հրահրելով վերջինիս պաշտամունքը երիտասարդների հոգիների մեջ:

Այսպիսով, կարևոր է, որ անկախ ազգային գաղափարախոսության հայեցակարգի առկայությունից, չթերագնահատվի ՆԶՊ առարկայի դերակատարումը աշակերտների ռազնահայրենասիրական դաստիարակության գործում: Նշված առարկայի ուսուցումը, այնուամենայնիվ, համալիր մոտեցում է պահանջում: Ռազմագիտությունն ուսումնական ծրագրի այն առարկաներից է, որի ուսուցումը հնարավոր չէ կազմակերպել միակողմանի և կտրված տարբերակով: Այն լիովին առնչվում է աշակերտի դաստիարակության գործընթացին և հիմքում ունի նաև մայրենի լեզվի, պատմության և այլ առարկաների գիտելիքներով վերազինումը:

Դպրոցական մթնոլորտում յուրաքանչյուր աշակերտ, անկախ իր ստացած դաստիարակությունից, անշուշտ, տոգորվում է գիտակցված հայրենասիրությամբ, ճանաչում մեր պատմության դրվագները, մշակույթի գանձերը և գիտակցում, որ ինքն արժանի ժառանգորդը, պահապանն ու փոխանցողը պիտի դառնա այս ամենի:

Հայրենսեր, հայրենիքին անմնացորդ ծառայելու, զինվորագրվելու պատրաստակամ սերնդի դաստիարակության անհրաժեշտությամբ է պայմանավորված մագիստրոսական ատենախոսության թեմայի ընտրությունը:

Հետազոտության նպատակը ժամանակակից հիմնական դպրոցում ռազմահայրենասիրական դաստիարակության հիմնախնդիրների բացահայտումն ու լուծման մանկավարժական ուղիների առաջադրումն է:

Հետազոտության խնդիրներն են՝ բացահայտել հիմնական դպրոցում ռազմահայրենասիրական դաստիարակության հիմնախնդիրները, համեմատել ՀՀ և արտերկրի հիմնական դպրոցներում ռազմահայրենասիրական դաստիարակության հիմնախնդիրների լուծմանն ուղղված աշխատանքների բովանդակությունը, առաջադրել հիմնական դպրոցում ռազմահայրենասիրական դաստիարակության հիմնախնդիրների լուծման մանկավարժական ուղիներ:

Հետազոտության օբյեկտը հիմնական դպրոցում ռազմահայրենասիրական դաստիարակության հիմնախնդիրներն են:

Հետազոտության առարկան հիմնական դպրոցում ռազմահայրենասիրական դաստիարակության հիմնախնդիրների լուծման մանկավարժական ուղիներն են:

Հետազոտության տեսական և գործնական նշանակությունը: Ժամանակակից հիմնական դպրոցում ռազմահայրենասիրական դաստիարակության հիմնախնդիրների բացահայտմանն ու լուծմանն ուղղված աշխատանքների վերաբերյալ մեր ուսումնասիրությունը կհարստացնի մանկավարժական գիտության տեսական բազան: Հիմնական դպրոցում ռազմահայրենասիրական դաստիարակության մեր կողմից բացահայտված հիմնախնդիրները և առաջադրված մանկավարժական ուղիները կնպաստեն դրանց լուծման արդյունավետության բարձրացմանը:

Հետազոտության մեթոդները: Աշխատանքն իրականացնելիս օգտագործել ենք դիտման, զրույցի, հարցաթերթի մեթոդները:

Աշխատանքի կառուցվածքն ու ծավալը: Աշխատանքը բաղկացած է բովանդակությունից, ներածությունից, երկու գլուխներից, եզրակացությունից, օգտագործված գրականության ցանկից: Ընդհանուր ծավալը համակարգչային20 էջ է:

ԳԼՈՒԽ 1. ՌԱԶՄԱՀԱՅՐԵՆԱՍԻՐԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑՈՒՄ

1.1.Ռազմահայրենասրիական դաստիարակության բովանդակությունը և հիմնախնդիրները հիմնական դպրոցում

Ազգային արժեհամակարգի կրող երիտասարդ սերնդի ձևավորման գործում կարևոր դեր է խաղում ռազմահայրենասիրական դաստիարակությունը, որով սերմանվում է հայրենիքի հանդեպ սեր և նվիրվածություն, երկրի առաջընթացին սեփական ջանքերով նպաստելու ձգտում: Ժամանակակից հասարակության մեջ երիտասարդության հայրենասիրական

դաստիարակությունն առանձնակի կարևորություն է ձեռք բերում մի քանի պատճառներով. բարձրանում է նոր սերնդի տեղեկացվածության մակարդակը, ժողովրդավարացման գործընթացները որոշակի դժվարություններ են ստեղծում՝ ըմբռնելու հայրենասիրության էությունը: Անհրաժեշտություն է առաջանում երիտասարդության ռազմահայրենասիրական դաստիարակությունն իրականացնել որակապես նոր մակարդակով: Ակնհայտ է, որ այսօր կրթական հաստատություններում սովորողների ռազմահայրենասիրական դաստիարակությանը բավարար ուշադրություն չի դարձվում: Ակնհայտ է նաև, որ խորհրդային ժամանակաշրջանում կուտակված հարուստ փորձը չի կարող իր ամբողջ ծավալով կիրառվել նոր պայմաններում, ինչով էլ պայմանավորվում է ռազմահայրենասիրական դաստիարակության հարցերով զբաղվող փիլիսոփայական մանկավարժական ժառանգության վերաիմաստավորման անհրաժեշտություն, դրա ժամանակակից տեսական հիմքերի մշակումը: Հիմնահարցի փիլիսոփայական, հոգեբանամանկավարժական վերլուծությունը թույլ է տալիս որոշարկել հայրենասիրության՝ որպես սոցիալական երևույթի և անձի բարոյական հատկանիշի էական առանձնահատկությունները: Ժողովրդավարական հասարակության պայմաններում «ռազմահայրենասիրություն» հասկացությունն օգտագործվում է որպես կարգախոս տարբեր հասարակական-քաղաքական կառույցների կողմից, հետևաբար մեկնաբանվում է տարբեր կերպ, այդ պատճառով էլ կարևոր է դառնում նրա բովանդակության ճշգրտումը և առանձնահատկությունների սահմանումը նոր սոցիալ-տնտեսական և քաղաքական պայմաններում, ինչը թույլ կտա երիտասարդության հայրենասիրական դաստիարակությունն իրականացնել գիտական հենքի վրա:

Աճող սերնդի դաստիարակության գործում հանրակրթական դպրոցն առաջատար դեր է խաղում, ահա թե ինչու մանկավարժական կադրերի պատրաստման և կատարելագործման հարցերը ներկայումս առանձնակի հրատապություն են ձեռք բերում:

Ժամանակակից ուսուցչին ներկայացվող սոցիալական պատվերը ուսումնադաստիարակչական գործընթացը որակապես նոր մակարդակի բարձրացնելն է: Սակայն ուսուցիչների նախապատրաստումը հարկ եղած չափով չի համապատասխանում արդի պահանջներին: Ռազմահայրենասիրական դաստիարակության նպատակն ու արդյունքը հայրենասիրության ձևավորումն ու զարգացումն է: Ընդ որում՝ էական է հասարակական փորձի փոխանցումը սերնդին՝ որպես անձնական ձեռքբերում, ինչն արտացոլում է դաստիարակության գործընթացի էությունը՝ արտաքինի, օբյեկտիվի փոխադրումը ներքին, սուբյեկտիվ աշխարհ: Ռազմահայրենասիրական դաստիարակությունն իրականացվում է դաստիարակչական աշխատանքի մյուս ուղղությունների հետ միասին: Այն փոխկապակցված է քաղաքացիական դաստիարակության հետ, սակայն, մեր կարծիքով, առավել նպատակահարմար է

հայրենասիրական դաստիարակությունը դիտել ոչ թե որպես վերջինիս մաս, այլ որպես դաստիարակչական աշխատանքի ինքնուրույն ուղղություն:

Հայրենասիրություն դաստիարակելը պահանջում է հետևողական, համբերատար աշխատանք, այն չի ձևավորվում միանգամից, դրա ակունքները շատ խորն են, գալիս են նախնիներից, սկիզբ են առնում ընտանիքում, բակում, ընկերական և հասարակական հարաբերություններում, դառնում կայուն որակ և անձի անբաժանելի մաս ու բնավորության գիծ: Դրանք ստանում են գաղափարական հիմնավորում և մարդը սովորում է, թե ինչպես պետք է ապրի ու վարվի, որ պատշաճ ու հարիր լինի այն հասարակության ընդունած ու գործող նորմերին, որում ապրում է:

Սովորաբար աշակերտը դեռահասության և պատանեկան տարիքում իր արարքներում հաճախ հիմնվում է հասարակական կարծիքի և բարոյական պատկերացումների վրա, յուրացնում է դրանք դաստիարակության պրոցեսում, և գալիս է մի պահ, որ արդեն կարող է ինքնուրույն կարգավորել ու վերահսկել իր արարքները, գործողությունները՝ առաջնորդվելով սեփական բարոյական նորմերով, արժեքներով, պարտքի պատասխանատվության գիտակցմամբ, սեփական արժանապատվությամբ ու խղճի թելադրանքով:

Այս տարիքում կարելի է խոսել հայկական ինքնության մասին: Պետք է բացատրել, որ «Ինքնությունը ունենում է տարբեր անդրադարձներ, որոնք վերաբերում են՝

ա) Ես-ի կամ անձի ինքնությանը,

բ) սոցիալական ինքնություն, որը կապված է անձի սոցիալական կարգավիճակի և վերջինիս անձի մակարդակում վերծանման հետ,

գ) կոլեկտիվ ինքնություն, որը կարող է կապված լինել այն կոլեկտիվի կամ կոլեկտիվների հետ, որին տվյալ պահին անձը պատկանում է,

դ) մասնագիտական, որը առնչվում է անձի ընտրած մասնագիտությանը,

ե) էթնոազգային ինքնություն, որտեղ խոսվում են թե՛ ազգային պատկանելության հույժ կարևոր, թե՛ էթնոսին առնչվող ինքնության ուղենիշները:

Այս ամենն առանձնանում է հետևյալ ընդհանուր գծերով՝ նմանատիպ լեզու, հագնվելու մշակույթ և միևնույն ազգային ծագում, աշխարհագրական ապրելավայր, կրոն, զբաղմունքների ձևեր և սեփական ինքնությունը պահպանելու հակվածություն»: Դաստիարակության կարևոր կողմերից է ազգային ինքնագիտակցության, ազգային պատկանելության խնդիրը, և հարկ է սովորողի գիտակցությանը հասցնել հայրենասերի բարձր կոչումը, հայրենիքի վեհ գաղափարը և նախնիների փառավոր անցյալը, և ավելորդ չէ մեկ անգամ ևս փաստել, որ հայի հայրենասիրությունը խարսխված է դարավոր

պատմության ակունքներում, նախնիների և նրանց անցած փառավոր ուղու և փորձի, ինչպես նաև մեր օրերի արցախյան պատերազմում թրծված ազատամարտիկների սխրանքի, անձնուրացության, անուրանալի կամքի, արժանավայել ապրելու, հողը և հարազատներին պաշտպանելու, հայրենիքը, ծնողին և երեխային աստվածացնելու ու անմահացնելու հիման վրա: Մեր նախնիներից մեզ է փոխանցվել նրանց արդարամիտ, քաջ ու անկոտրում կամքը, տոկունությունը, լավատեսությունը և անսահման սերը հայրենիքի նկատմամբ և անմնացորդ նվիրվելու պատրաստակամությունը, որը հայրենիքի անկախության ու ազատության կարևորագույն գրավականներից մեկն է: Պետք է հստակ գիտակցել, որ հայրենիքը սոսկ աշխարհագրական միջավայր չէ, այլ հոգևոր արժեքներով հարուստ ու սրբազան անկյուն, տարածք, որը քոնն է և յուրաքանչյուր հայինը: Այդ առումով կարելի է նշել Նժդեհի հետևյալ միտքը. «Հայաստան աշխարհը հայրենիք դարձրին Մեսրոպի այբուբենը,Մամիկոնյանների ուխտը, Բագրատունիների շինարարական մեծագործությունները»:

Հայրենասիրությունը՝ որպես բարոյահոգեբանական բարձրագույն արժեք, սովորողների մոտ ձևավորվում է մասնագիտական կարևոր հատկանիշների, կարողությունների հետ զուգակցված: Ասել է թե, այն պատվաստվում և կիրառվում է կյանքի տարբեր ոլորտներում: Սովորողների հայրենասիրական դաստիարակության և բարձր պատասխանատվության ձևավորման համար շատ կարևոր են հետևյալ նախապայմանները. ձևավորել գիտակցական մոտեցում հայրենիքի, նրա անցյալի, ներկայի և ապագայի հանդեպ՝ պատմական և ազգային արժեքների հիման վրա, սովորողների մեջ զարգացնել ազգային ինքնագիտակցությունը ձևավորել հայրենասիրական ոգի, զարգացնել հայրենիքի նկատմամբ հպարտության, մեր լինելիության, գոյի անբեկանելի հավատ, զարգացնել և խորացնել հայրենի երկրի պատմությունն ու ավանդույթները, ինֆորմատիկայի դասերին յուրաքանչյուր սովորողի համար ակտիվ մոտեցման միջոցով պայմաններ ստեղծել քաղաքացիական նկարագրի ձևավորման տեսանկյունից. ապահովել

կազմակերպչամեթոդական աշխատանքներ, իրականացնել ընտրություն ուսուցման օպտիմալ ձևերի և աշխատելու մեթոդների միջև, գործածե նորարարական

տեխնոլոգիաները, զարգացնել իրավական դաշտը ինֆորմատիկայի դասերի միջոցով, սովորողների մոտ ձևավորել ակտիվ կյանքի դիրքորոշում, սովորողների մեջ ձևավորել առողջ ապրելակերպի անհրաժեշ տությունը: Հիմնական դպրոցի ուսումնադաստիարակչական աշխատանքները պլանավորելիս պետք է նկատի ունենալ ռազմահայրենասիրական դաստիարակության խնդիրները, սերտ կապ ստեղծել պաշտպանական մարզատեխնիկական կազմակերպության խորհրդի, զորամասերի, հիմնարկ-ձեռնարկությունների, վետերանների խորհուրդների և ծնողների հետ:

Դպրոցականների ռազմահայրենասիրական դաստիարակությունը պետք է իրականացվի հետևյալ ուղղություններով՝

1. Դպրոցականների մեջ զարգացնել հայրենասիրության գաղափարը, գիտակցված պատկերացում տալ հայրենասիրության մասին:
2. Ծանոթացնել մեր հարենիքի հերոսական անցյալին, հայ ժողովրդի փառավոր մարտական, աշխատանքային ավանդույթներին (Ղարաքիլիսայի, Բաշ-Ապարանի և Սարդարապատի հերոսամարտեր):
3. Սեր ու հարգանք ներշնչել զինված ուժերի, մարտական ռազմական աշխատանքի նկատմամբ, ճիշտ ըմբռնել զինված ուժերի դերը՝ որպես հայ ազգի և հայ պետականության միակ երաշխավորի:
4. Դպրոցականների մեջ ձևավորել այնպիսի բարոյահոգեբանական բարձր որակներ, ինչպիսիք են՝ քաջություն, կարգապահություն, պատրաստ լինել սխրագործության, մշտական պատրաստակամություն, հավատ ուժի նկատմամբ:
5. Աշակերտների մեջ դաստիարակել կենդանի հետաքրքրություն ռազմական գործի նկատմամբ, ձգտում ուսումնասիրելու և տիրապետելու ռազմական մասնագիտություններ:
6. Դպրոցականներին ֆիզիկապես կատարելագործել ու կոփել, զարգացնել ուժ, դիմացկունություն, հնարամտություն և այլն:
7. Երեխաներին ներգրավել հետևյալ աշխատանքներում՝ զբաղվել ընթերցանությամբ, քննարկել ռազմագեղարվեստական, արկածային գրականություն, դիտել և վերլուծել ռազմահայրենասիրական թեմաներով գեղարվեստական ու վավերագրական կինոնկարներ:
8. Ռազմահայրենասիրական դաստիարակությունը պահանջում է նպատակասլացություն և հաստատակամություն ամբողջ հասարակայնության և հատկապես դպրոցների մանկավարժական կոլեկտիվների ուշադրությունը հրավիրելով այդ գործի վրա:

Դժվար չէ եզրակացնել, որ դպրոցներում հայրենասիրության խնդիրը լուծելու համար դասագրքերում ընգրկված նյութերն առավել մեծ հետք են թողնում դաստիարակության գործում, քանզի դրանց յուրացումը, քննարկումը պարտադիր բնույթ են կրում, իսկ միջոցառումները, որպես դրան նպաստող գործոններ (հայրենասիրության թեմայով մրցույթների անցկացում, անկախության օրվան, բանակի օրվան նվիրված հանդեսների կազմակերպում, պատի թերթերի ստեղծում) ուսուցչի հայեցողությամբ են կազմակերպվում: Մեր դասագրքում տեղ չեն գտել բազմաթիվ գրողների հայրենասիրական ստեղծագործություններ՝ 1999 թ. լույս տեսած Լևոն Խեչոյանի «Սև գիրք, ծանր բզեզ» վեպը, որը հայ գրականության առաջին և ամենահաջողված արձագանքներից է Արցախյան հերոսամարտի մասին, Հովհաննես Երանյանի «Զինադադար» վիպակը, Հովիկ Վրդումյանի

«Կանթեղ» վեպը և շատ այլ ստեղծագործություններ, որոնք պետք է ընդգրկված լինեին դասագրքերում: Արդի դպրոցին պետք է ջերմություն, հոգի: Նա պիտի լինի հայրենագիտության ամբիոն, տաճար: Սրտի և մտքի կրակով է պետք խոսել հայրենի երկրի մասին՝ հրահրելով հայրենիքի պաշտամունքը երեխաների հոգիներում: Պատմությունը բաբախուն սիրտ է: Սիրտ է պետք դնել դասերի մեջ, սիրտ, ոչ թե ցամաք անցքեր, թվեր, անուններ: Մեր նոր սերունդը պետք է դասեր առնի պատմությունից և չմոռանա հերոսների պատգամը՝ հպարտ զգան, որ հազարամյակների խորքից եկող տաղան դաշատ և ստեղծագործ հայ ժողովրդի զավակներ են: Չմոռանան, որ մենք ազատագրել ենք Արցախը, որ մեր պահանջատիրության առաջին քայլն է: Զորավիգ լինեն մեր տառապած, բայց հաղթական հայ ժողովրդին ու հայրենիքին, քանի որ «Հայրենասիրությունը զոհողության աղբյուր է արդեն այն պատճառով, որ վարձատրության չի սպասում, երբ կատարում է պարտքը»:

Աշխարհաքաղաքական ժամանակակից զարգացումների ֆոնին, էթնիկական ու կրոնական, միջազգային ահաբեկչության սպառնալիքների պայմաններում առաջնային դերակատարում է ստանձնում հայրենասիրությունը: Որպես արժեք այն բազմաբովանդակ է: Հասկանալով հայրենասիրության էությունն ու բնույթը, ըստ այդմ, կկարողանանք մեկնաբանել ռազմահայրենասիրական դաստիարակության նշանակությունը: Անժխտելի է, որ հայրենասիրությունը հանդիսանում է ազգի, ժողովրդի, հասարակության, պետության, սոցիալական հանրույթի, անհատի գոյատևման անբաժանելի բաղադրիչը, իսկ հասարակության և պետության դիալեկտիկական գոյատևումն անհնար է պատկերացնել առանց այդ իսկ կառույցների միասնության, ամբողջականության, դինամիկ ու բարեհաջող զարգացման կարևորագույն պայման հայրենասիրության: Հայրենասիրությունը հայ ժողովրդի համար ունի իր ինքնատիպ առանձնահատկությունները՝ պայմանավորված ազգային էթնիկական անկրկնելի պատմական զարգացմամբ, հոգևոր ու նյութական մշակույթով, աշխարհաքաղաքական ու բնապատմական զարգացումներով պայմանավորված կյանքի ընթացքով, հայ էթնոսի արիական, աշխարհաստեղծ մենթալիտետով, ազգային ինքնագիտակցությամբ, ի վերուստ տրված հարատևման անհրաժեշտությամբ:

Փորձենք հասկանալ հայրենսիրության տեղն ու դերը, դրա էությունը անհատի, հասարակության ու պետության կյանքում: Այստեղ փորձենք պարզաբանել մի քանի ելակետային դրույթներ.

1. հայրենասիրությունը ձևավորվում և զարգանում է որպես հոգևոր-բարոյականի հաստատմամբ առավել սոցիալիզացված զգացմունք,

2. հայրենասիրությունը՝ որպես իր բնույթով խորապես սոցիալական երևույթ, իրենից ներկայացնում է ոչ միայն հասարակական կյանքի որոշակի կողմ, այլև դրա գոյության և զարգացման էական աղբյուր,
3. հայրենասիրության առաջնահերթ սուբյեկտ է հանդիսանում անհատը, ում գերակա սոցիալ-բարոյական խնդիրն է իր հայրենիքին պատմական, մշակութային, ազգային և հոգևոր պատկանելության գիտակցումը՝ որպես կյանքի իմաստն ու բովանդակությունը որոշող բարձրագույն սկզբունք:
4. հայրենասիրության իմաստը դրա հոգևոր արժեքայնության մեջ է, անփոխարինելի արժեք է, անսպառ աղբյուր:

Ազգային արժեհամակարգով երիտասարդ սերնդի ձևավորման գործում կարևոր դեր է խաղում հայրենասիրական դաստիարակությունը, որով սերմանվում է հայրենիքի հանդեպ սեր և նվիրվածություն, երկրի առաջընթացին սեփական ջանքերով նպաստելու ձգտում: Ժամանակակից հասարակության մեջ երիտասարդության հայրենասիրական դաստիարակությունն առանձնակի կարևորություն է ձեռք բերում մի քանի պատճառներով. բարձրանում է նոր սերնդի տեղեկացվածության մակարդակը, ժողովրդավարացման գործընթացները և քաղաքական կյանքում բազմակուսակցական համակարգի գոյությունը որոշակի դժվարություններ են ստեղծում՝ ըմբռնելու հայրենասիրության էությունը:

Ռազմահայրենասիրական դաստիարակությունը (ՌՀԴ) Հայաստանի Հանրապետության պետական քաղաքականության կարևորագույն ուղղություններից է: Այս մասին ասված է ՀՀ կառավարության կողմից մշակած «Սովորողների ռազմահայրենասիրական դաստիարակության ռազմավարություն» կոչվող օրենքի նախագծում: Օրինագծում նշվում է, որ ՌՀԴ ռազմավարությունը ուղղված է ՌՀԴ իրականացման կայուն զարգացման ապահովմանը՝ նպաստելով գործունյա, հայրենիքի պաշտպանությանը պատրաստ քաղաքացու ձևավորմանը, հայոց բանակում պատանիների ծառայության նախապատրաստմանն ու պարտքի զգացումի ձևավորմանը, զինվորականի մասնագիտության հանդեպ գրավչության մեծացմանը, ազգային արժեքների գիտակցմանը, հայրենիքի հանդեպ նվիրվածության գիտակցմանը, կարգապահության ամրապնդմանը, հայրենիքը թշնամուց պաշտպանելու գիտակցմանը:

«ՌՀԴ-ն անձի ձևավորման մշտական գործընթաց է, որն ուղղված է հայրենիքի հանդեպ սիրո ցուցաբերման, նրա պաշտպանությանը բարոյապես և ֆիզիկապես պատրաստ քաղաքացու ձևավորմանը», - ընդգծում են օրինագծի հեղինակները:

Ռազմավարության նպատակն է՝ ՌՀԴ կազմակերպումը և իրականացումն ապահովող համակարգերի արդիականացումը և կայուն զարգացման ապահովումն է Հայաստանի Հանրապետության ժամանակակից մարտահրավերներին համապատասխան՝ ապահովելով

պետական, համայնքային և հասարակական կառույցների ներդաշնակ համագործակցությունը՝ հայրենիքի պաշտպանությանը:

Սովորողների ռազմահայրենասիրական դաստիարակության իրականացման գործընթացի կայուն զարգացման ապահովումը պայմանավորված է առաջին հերթին Հայաստանի Հանրապետության առջև ծառացած ժամանակակից մարտահրավերներով: Արտաքին մարտահրավերների շարքում նշվում են պատերազմները, շրջափակումը, աշխարհում և հարևան երկրներում մոլեգնող ահաբեկչություններն ու պատերազմները, հարևան որոշ պետությունների ծավալապաշտական նկրտումները:

Որպես ներքին մարտահրավերներ ներկայացվում են՝ հայրենիքի պաշտպանությանը ոչ պատրաստակամ քաղաքացիների առկայությունը, զինվորական ծառայության և զինվորականի մասնագիտության հանդեպ գոյություն ունեցող անտարբերությունը, օտար մշակութային արժեքներին հաղորդակից լինելու տենդենցը, անկարգապահությունն ու անդաստիարակությունը, դպրոցահասակ երեխաների մոտ (հատկապես՝ ավագ դպրոցի) փողոցային արատավոր վարքագծի դրսևորումների աճը (փողոցային արատավոր բառամթերքի օգտագործումը և համապատասխան վարքագծի դրսևորումը), արտագաղթը, տնտեսության դանդաղ զարգացումը՝ պայմանավորված վերը նշված գործոններով, թմրամոլությունը, թունամոլությունը:

Վիճահարույց չէ իհարկե, որ հատկապես վերջին շրջանում Հանրապետության բազմաթիվ դպրոցներ համալրվել և շարունակվում են համալրվել ռազմաուսումնական տեխնիկայով ու համապատասխան կադրերով: Բայց և փաստ է, որ շատ դպրոցներում թափուր է զինղեկների հաստիքը, իսկ այդ դասաժամերն ստանձնողներից ոմանք էլ չունեն համապատասխան որակավորում: Դեռ 2018թ-ին ՀՀ գլխավոր զինկոմ, գեներալ-մայոր Կամո Քոչունցը նշել է, թե՝ «մատների արանքով մոտեցումը ռազմահայրենասիրական դաստիարակությանը՝ որպես դասավանդման առարկայի, ակնհայտ է»: Նախարարի համոզմամբ՝ ոչ անձի, ոչ էլ խմբի, այլ հասարակության խնդիրն է արժանապատիվ սերունդ դաստիարակելը: Եվ ընտանիքից ու նրա հիմնայունը հանդիսացող մայրերից շատ բան է առկախ: Հենց պատմության դասերը նկատի ունենալով՝ զինվորական նախնական պատրաստվածությունը չպետք է դիտարկել սոսկ որպես միջնակարգ կրթության ավարտական դասարաններում բաղկացուցիչ առարկա՝ սահմանափակվելով թռուցիկ դասավանդումով: Դա, իհարկե, նաև միայն ընտանեկան խնդիր չէ: Ահա թե ինչու Պաշտպանութան նախարարը հասարակության բոլոր շերտերի գերխնդիր է համարում ռազմահայրենսիրական դաստիարակության հարցը: Այս առումով ընդգծելով ԿԳ նախարարության հետ նպատակամետ համագործակցության կարևորությունը՝ Նախարարն հավաստիացնում է, որ թեմային առնչվող բոլոր խնդիրները կքննարկվեն, և կկենսակոչվեն լավագույն տարբերակները.

«Նախնական զինվորական պատրաստականության արդի իրավիճակը բոլորիս է մտահոգում, և միայն միասնական ջանքերով է հնարավոր դրանք որակական նոր աստիճանի բարձրացնել»:

Գաղտնիք չէ, որ բանակ զորակոչվող երիտասարդների մեծ մասը զինվորական ծառայության է ներկայանում անպատրաստ, ինչն այդ հարցին ոչ ճիշտ մոտեցման արդյունք է: Երեխայի մեջ դեռ մանկուց պետք է սերմանել հայրենասիրություն, համարձակություն, ռազմական ոգի, դժվարությունները հաղթահարելու կարողություններ, արժանապատվություն:

Ռազմահայրենասիրական դաստիարակության հիմնական խնդիրներն են՝

1. Բարձրացնել աշակերտների մարտունակ ու քաջ ոգին:
2. Ձևավորել ու զարգացնել հայրենասիրական բարձր գաղափարներ:
3. Յուրաքանչյուր աշակերտի ներշնչել իր կատարած գործի կարևորության ու նշանակալիության մասին համոզմունքը:

2. ՀՀ և արտերկրի դպրոցներում ռազմահայրենասիրական դաստիարակության հիմնախնդիրների լուծմանն ուղղված աշխատանքների համեմատական վերլուծություն

Ռազմահայրենասիրական դաստիարակությունը և գրագետ, հոգեպես ու ֆիզիկապես կոփված, բանակի մասին տեղեկացված ու պատրաստված սերունդ դաստիարակելու գործընթացը մեզանում օրեցօր ավելի է կատարելագործվում, իսկ արդյունքները տեսանելի են բոլորին: Այս խնդիրների լուծմանը միտված աշխատանքներն ավելի արդյունավետ դարձնելու, հանրապետությունում ռազմահայրենասիրական դաստիարակության հիմնախնդիրներին լուծում տալու, ինչպես նաև համատեղ միջոցառումների ծրագիր իրականացնելու նպատակով ՀՀ պաշտպանության նախարարության կողմից զանազան միջոցառումներ են կազմակերպվում ամեն տարի: Անհրաժեշտ է հենց դպրոցից պատրաստել գրագետ, հայրենասեր զինվոր: Այսօր ռազմահայրենասիրական դաստիարակության և նախնական զինվորական պատրաստության դասարանները հագեցած են զորատեսակները, համազորային կանոնադրությունը, զինվորական կոչումները ներկայացնող հարուստ պաստառներով, որոնք ավելի կենդանի, իրական ու

հետաքրքիր են դարձնում դասանյութը: Դպրոցների բակերում ու ներսում ծածանվող եռագույնը, ՀՀ և ԶՈՒ զինանշանները, օրհներգերի տեքստերը զգաստություն ու հպարտություն են ներշնչում: Այս մթնոլորտում յուրաքանչյուր աշակերտ՝ անկախ իր ստացած դաստիարակությունից, անշուշտ, տոգորվում է գիտակցված հայրենասիրությամբ, ճանաչում մեր պատմության դրվագները, մշակույթի գանձերը և գիտակցում, որ ինքն արժանի ժառանգորդը, պահապանն ու փոխանցողը պիտի դառնա այս ամենի: Դպրոցականին այս միջավայրում կրթելն ու դաստիարակելն, ինչ խոսք, ցանկալի է և անհրաժեշտ, իսկ արդյունքները՝ տեսանելի և զոհացնող: Նախաձեռնությունների և տարվող աշխատանքների պակաս չի զգացվում, հատկապես, որ ռազմահայրենասիրական դաստիարակության բարելավման խնդիրը մի քանի գերատեսչությունների ուշադրության կենտրոնում է: Ռազմահայրենասիրական դաստիարակության արդյունավետ կազմակերպման համար կարևոր խթան են հանդիսացել պաշտպանության նախարարության աջակցությամբ աշակերտների այցելությունները «Մայր Հայաստան» և «Սարդարապատ» թանգարաններ, Վազգեն Սարգսյանի և Արմենակ Խանփերյանցի անվան ռազմական ինստիտուտներ, ՀՀ ԶՈՒ զորամասեր, հայոց զինական արվեստին ու պատմությանն առնչվող պատմական վայրեր ու հուշահամալիրներ:

ԳԼՈՒԽ 2 Հիմնական դպրոցում ռազմահայրենասիրական դաստիարակության հիմնախնդիրների լուծման մանկավարժական ուղիները

Դպրոցում ուսանելու տարիներին ձևավորվում են դպրոցականների դրդապատճառները, վարքի ձևերը, գիտելիքները, փորձն ու հմտությունները: Ուսումնական գործընթացում հարստանում է երեխայի կենսափորձը, ընդլայնվում է ճանաչողական ոլորտը, զարգանում են զգացմունքները, կամքը և բարոյական կերպարը: Դպրոցում ուսուցիչներն անցկացնում են տարբեր միջոցառումներ հայրենիքի, հավատարմության և նվիրվածության, աշխատանքի, գեղեցիկի, գեղագիտական զգացմունքների և այն ամենի մասին, ինչը ձևավորում է բազմակողմանի զարգացած, ներդաշնակ մարդ-քաղաքացի և հայրենասեր: Տարբեր տարիքի երեխաների հոգեկան հատկությունների ուսումնասիրությունը հնարավորություն է տալիս ճիշտ որոշելու երեխաների ուսումնադաստիարակչական աշխատանքների բովանդակությունը և ցուցաբերել անհատական մոտեցում: Իսկ երեխայի բարոյական հատկությունների զարգացումը իրենից ներկայացնում է նրա գործունեության տարբեր տեսակներով պայմանավորված փոփոխությունների բարդ ու երկարատև գործընթաց: Տարրական դասարաններում բարոյական գնահատումները պարզելու համար ուսուցիչը օգտվում է զրույցի, դիտումների մեթոդներից, կարդում է հեքիաթներ և

պատմվածքներ հերոսների, քաջերի մասին ու այդ ընթացքում ուշադրություն է դարձնում երեխաների դրսևորած վերաբերմունքին, ժեստերին, միմիկային, արած արտահայտություններին: Ուսուցիչը ցուցադրում է տարբեր իրավիճակային նկարներ, կոնֆլիկտային իրադրություններ և որոշում նրանց ճիշտ կողմնորոշվելու կարողությունը, նրանց դրական կամ բացասական վերաբերմունքը, համարձակությունն ու պատրաստակամությունը օգնության հասնելու և այլն, որոնք այն նախադրյալներն են, որոնք հետագայում կձևավորեն նաև հայրենասիրություն: Հատուկ զրույցների միջոցով երեխաներին ծանոթացնում են, թե ինչ է հայրենիքը, ինչ է պահանջվում իրենցից և փորձում են նրանց հասանելի ձևով բացատրել, թե ինչու ենք սիրում նրան: Հայրենասիրություն դաստիարակելը պահանջում է հետևողական, համբերատար աշխատանք, այն չի ձևավորվում միանգամից, դրա ակունքները շատ խորն են, գալիս են նախնիներից, սկիզբ են առնում ընտանիքում, բակում, ընկերական և հասարակական դերում, դառնում կայուն որակ և անձի անբաժանելի մաս ու բնավորության գիծ: Դրանք ստանում են գաղափարական հիմնավորում և մարդը սովորում է, թե ինչպես պետք է ապրի ու վարվի, որ պատշաճ ու հարիր լինի այն հասարակության ընդունած ու գործող նորմերին, որում ապրում է: Սովորաբար աշակերտը դեռահասության և պատանեկան տարիքում իր արարքներում հաճախ հիմնվում է հասարակական կարծիքի և բարոյական պատկերացումների վրա, յուրացնում է դրանք դաստիարակության պրոցեսում, և գալիս է մի պահ, որ արդեն կարող է ինքնուրույն կարգավորել ու վերահսկել իր արարքները, գործողությունները՝ առաջնորդվելով սեփական բարոյական նորմերով, արժեքներով, պարտքի պատասխանատվության գիտակցմամբ, սեփական արժանապատվությամբ ու խղճի թելադրանքով: Հատկապես ավագ դպրոցական տարիքում կարելի է խոսել հայկական ինքնության մասին:

Ռազմահայրենասիրական դաստիարակությունը ենթադրում է նպատակաուղղված իմացական, բարոյականային ու ֆիզիկական պատրաստակամություն հայրենիքի պաշտպանության համար, ցանկացած ագրեսորի հակահարված տալու համար, հայրենիքի ռազմատնտեսական հզորության ամրապնդման համար: Հայրենասիրական դաստիարակության նպատակը պետք է դիտարկել ցանկացած ազգի առողջ զարգացման համար այնպիսի մի գործընթացային համակարգի մեջ, ինչպիսին է նրա անդամների ազգային սոցիալականացումը:

Հայրենասիրական դաստիարակությունը չպետք է նույնացնել ռազմամոլության հետ, այլ ազգերի հանդեպ ծայրահեղ անհանդուրժողության ձևավորման հետ: Հայրենասիրությունն ու մարդասիրությունը միանգամայն համատեղելի են, միայն մարդասերը կարող է սիրել իր ազգը: Բացարձականացնելով մարդու գաղափարը որպես մեծագույն արժեք՝ Գ. Նժդեհը նշում էր՝« Միայն մայր կոչվելու արժանին կարող է

արժանաբար հայ կոչվել»: Երիտասարդության դաստիարակության գործում Նժդեհը կարևորում է դպրոցի դերը: Նրա կարծիքով դպրոցը պետք է հանդիսանա հայրենասիրության տաճարը և դեռ այնտեղ պետք է հայ պատանին ճանաչի և սիրի հայրենի երկիրն ու ժողովրդին: Դպրոցն է, որ պատանու հոգու մեջ պետք է սերմանի մեր ատմության բովանդակ գեղեցկությունն ու վեհությունը: Երիտասարդների հայրենասիրության գործում կարևոր է նաև համազգային տոների դերակատարությունը: Համազգային տոները ազգային արժեքներ են սերմանում հայ երիտասարդության, ինչպես նաև ողջ հասարակության մեջ:

Հանրակրթական դպրոցներն այսօր ահռելի անելիքներ ունեն ռազմահայրենասիրական դաստիակարության ուղղությամբ: Դրանցից ամենահիմնականը ռազմագիտության, ֆիզկուլտուրայի, պատմության, աշխարհագրության և գրականության դասերին մեր խնդրո առարկայի առումով նպատակաուղղված գործունեություն ծավալելն է: Այստեղ հատկապես անհրաժեշտ է կարևորել նախնական զինվորական պատրաստվածության դերն այս գործում: Ռազմահայրենասիրական դաստիարակության նպատակը միայն ռազմագիտական գիտելիքներ ստանալը չէ: Այն այսօր նպատակ ունի լուծելու հրատապ դարձած մի կարևոր խնդիր ևս՝ պատանիներին հոգեբանորեն պատրաստել զինվորական ծառայության: Ռազմահայրանասիրական դաստիարակության համակարգի ձևավորումն ու ակտիվ գործառնությունը կապահովեն ավագ դպրոցականի այնպիսի սոցիալապես կարևոր որակների ձևավորումն ու զարգացումը, ինչպիսիք են՝ բարձր պատասխանատվությունը, հայրենիքի և ազգի նկատմամբ սերը ավանդույթների և մշակույթի նկատմամբ հետաքրքրությունը: Նախազորակոչային պատրաստվածության ուսուցիչների մանկավարժահոգեբանական գիտելիքներ հաղորդելը, կարողությունների և հմտությունների ձևավորումը բարձրացնում է դպրոցում ռազմահայրենասիրական դաստիարակության գործընթացի արդյունավետությունը, քանի որ միայն ռազմական գիտելիքներին տիրապետելը չի ապահովում ցանկալի արդյունք: Երիտասարդ սերնդի հայրենասիրական դաստիարակության կազմակերպման և իրականացման հայեցակարգի ստեղծումը և գործնականում ներդնումը անմիջականորեն պայմանավորում է զինվորական ծառայությանը՝ նախազորակոչային տարիքի պատանիների պատրաստության մակարդակի բարձրացումը: Ժամանակակից դպրոցում ռազմահայրենասիրական դաստիարակության արդյունավետ գործառնությունը հնարավոր է ամբողջական մանկավարժական գործընթացում:

Հայրենասիրական դաստիարակություն իրականացնող ապագա ուսանողների նախապատրաստման հայեցակարգային հիմքերը ներառում են հետևյալ դրույթները.

1. Հայրենասիրությունը բարդ երևույթ է. նրա էությունը կապվում է ոչ միայն առանձին քաղաքական կամ բարոյական սկզբունքի, այլև նրա առանձնահատկությունների

ինտեգրատիվության հետ, ինչը թույլ է տալիս հայրենասիրությունը դիտարկել որպես անձի սոցիալ-բարոյական ուղղվածության անբաժանելի մաս: Հայրենասիրության կառուցվածքում առանձնանում են մի քանի փոխկապակցված բաղադրատարրեր՝ մտավոր, պահանջմունքաշարժառիթային, հուզակամային և գործնական: Հայրենասիրության բովանդակության մեջ իրենց արտացոլումն են գտնում «Մայր հող» և «Հայրենիք» հասկացությունները: Առաջինը բնորոշում է մարդու բնական կապվածությունը հարազատ հողին: Երկրորդը պայմանավորված է որոշակի հասարակական հարաբերություններով, երկրի տնտեսական, քաղաքական, մշակութային առանձնահատկություններով:

Մեր երկրում տեղի ունեցող արմատական վերափոխումներն իրենց հետքն են թողնում հասարակության կյանքի տարբեր ոլորտների, այդ թվում՝ երիտասարդ սերնդի վրա, ինչը պայմանավորում է ժամանակակից պայմաններում հայրենասիրության բովանդակության առանձնահատկությունների բացահայտման անհրաժեշտությունը: Ժամանակակից պայմաններում հայրենասիրության բովանդակության կարևոր առանձնահատկությունն է նրա միտվածությունը դեպի ապագան: Իր հայրենիքին նվիրված մարդն անմիջականորեն մասնակցում է նրա առջև ծառացած խնդիրների լուծմանը: Տնտեսության վերելքը, ժողովրդավարական պետության կայացումը ուղղակիորեն կախված են հասարակության անդամի՝ իր հայրենասիրական պարտքի կատարումից, որն իրականացվում է ոչ միայն հերոսական արարքների միջոցով, այլ նաև ամենօրյա գործերով: Դա պայմանավորում է ժամանակակից հայրենասիրության ևս մեկ առանձնահատկություն. իսկական հայրենասիրությունն անանց բնույթ ունի և դասվում է համամարդկային արժեքների շարքը: Սովորողների հայրենասիրական դաստիարակություն իրականացնող ապագա ուսուցիչների նախապատրաստման գործընթացի էությունը աճող սերնդի հայրենասիրական դաստիարակության հասարակական-մանկավարժական փորձի յուրացումն է ուսանողների կողմից, համապատասխան գիտելիքների ձեռք բերումը, հմտությունների և ունակությունների, արժեքավոր կողմնորոշումների ձևավորումը՝ տարաբնույթ ակտիվ և արդյունավետ գործունեության հիման վրա: Ապագա ուսուցիչների նախապատրաստման նպատակն է հանդիսանում սովորողների հայրենասիրական դաստիարակության իրականացմանը ուսանողների պատրաստականության ձևավորումը, որը դիտվում է որպես անձի սուբյեկտիվ վիճակ, դրսևորվում է գործունեության տվյալ տեսակի նկատմամբ ունեցած ձգտմամբ և տվյալ գործունեության տիրապետմամբ: Պատրաստականությունը ներառում է երկու կողմ՝ բարոյահոգեբանական (բարոյահոգեբանական պատրաստվածություն) և արդյունավետ գործնական (տեսական և գործնական նախապատրաստվածություն):

Սովորողների հայրենասիրական դաստիարակության ուղղությամբ ուսանողների նախապատրաստման բովանդակության իրականացումը պահանջում է մանկավարժական

ներգործության այնպիսի մեթոդների և հնարների կիրառում, որոնք կարող են նպաստել սովորողների ակտիվ դիրքորոշման մշակմանը: Հայտնի մանկավարժական աքսիոմը՝ «միայն անհատականությունը կարող է անհատականություն ձևավորել», պայմանավորում է անհատապես կողմնորոշող ուսումնադաստիարակչական գործընթացի իրականացման անհրաժեշտությունը, որն ուղղված է սովորողների անձի զարգացման համար պայմանների ստեղծմանը: Նախապատրաստման գործընթացում ուսանողների գործունեության ակտիվացումը ենթադրում է ուսուցման հիմնա հարցային մեթոդների օգտագործում, հայրենասիրական դաստիարակության հիմնահարցերի վերաբերյալ բանավեճի կազմակերպում, «կլոր սեղանի», «բանավեճ ակումբի» տիպի պարապմունքների, համաժողովների անցկացում, ուսանողների կողմից մանկավարժական խնդիրների լուծում, մանկավարժական իրավիճակների ստեղծում- բեմականացում, ստեղծագործական առաջադրանքների կատարում և այլն: Հայրենասիրության հիմնահարցի քննարկմանը մասնակցելը նպաստում է ապագա ուսուցիչների մոտ սեփական տեսակետի մշակմանը, հայրենասիրական համոզմունքների ձևավորմանը, ինչպես նաև այդ համոզմունքները բացատրելու և դրանք պնդելու ունակությունների ձևավորմանը:

Այսպիսով, աշակերտների ռազմահայրենասիրության ամրապնդման գործում մեծ դեր ունի ուսումնադաստիարակչական ամբողջ գործընթացը, ինչի առնչությամբ անհրաժեշտ է լուրջ աշխատանքներ իրականացնել: Հայրենասիրության դասերը աշակերտի անձի ինքնահաստատման, կայացման, բարոյական արժեքների ձևավորման, պատշաճ վարվեցողության, ռազմական գաղափարադաստիարակչական մտածելակերպի բարձրացման և հետագայում զինված ուժերում ծառայելու նախապայման են հանդիսանում:

Հայրենասիրական աշխատանքը ներառում է հիմնականում ռազմահայրենասիրական թեմաներով միջոցառումներ, հանդիպումներ մարտական գործողությունների մասնակիցների, մերօրյա հերոսների, կամավորական ջոկատների հետ և այլն: Արդյունավետ են նաև սպորտային միջոցառումները, մրցակցային խաղերը, իսկ մարտական փառքի վայրերով արշավները ձևավորում են հարգանք ավագ սերնդի նկատմամբ և ամրապնդում նրանց գործի շարունակականությունը: Կարևորվում է զինղեկի համագործակցությունը հայոց լեզվի և պատմության ուսուցիչների հետ՝ առավել հիշարժան դարձնելով պատմության կարևորագույն իրադարձությունները, մեր ազգի հերոսների

գործունեությունը՝ կազմակերպելով այցելություններ պատմական հիշարժան վայրեր, հուշարձանների մոտ՝ ներկայացնելով հերոսների անցած փառավոր ուղին, ծաղիկներ դնելով և իրենց հարգանքի տուրքը մատուցելով: Այս ամենն անհետևանք չի անցնում: Դպրոցներում կարևոր է համարվում հոգեբանի աշխատանքը: Անհրաժեշտ է բարձրացնել աշակերտների ոչ միայն մարտունակ ու քաջ ոգին, այլև նպաստել հոգեբանական պատրաստվածությանը, որը պակաս կարևոր չէ: Յուրաքանչյուր աշակերտի պետք է ներշնչել իր կատարած գործի կարևորության ու նշանակալիության մասին համոզմունքը: Հայ զինվորը պետք է հպարտությամբ հիշի, որ ինքն ու իր ընկերները հաջողությամբ են պահպանելու հայրենիքի խաղաղությունն ու անդորրը: Դպրոցներում աշխատող հոգեբանների խնդիրներից է՝ ավարտական դասարաններում հոգեբանորեն նախապատրաստել տղաներին զինվորական ծառայությանը, որպեսզի նրանք պատրաստ լինեն զինվորական երդմանը, անձնուրաց կերպով և արիաբար ծառայելուն, պաշտպանելու իրենց հայրենիքը, կատարելու զինվորական պարտքը՝ անմռունչ տանելով զինվորական ծառայության դժվարությունները: Հոգեբանը պետք է ներշնչի ապագա զինծառայողներին խորապես հավատալու իրենց անձնական երդմանը, հավատալու, որ այն չափազանց կարևոր է ընդհանուր գործի հաջողության համար: Անհրաժեշտ է դրական գծեր և ազնիվ սկզբունքներ ձևավորել աշակերտների մեջ, ինչպես նաև աշխատանքներ կատարել բացասական երևույթների դեմ պայքարի ուղղությամբ:

Ժամանակակից հիմնական դպրոցում ռազմահայրենասիրական դաստիարակության հիմնախնդիրների լուծման մանկավարժական ուղիներն են՝

1. Աշակերտների համար պետք է ստեղծել այնպիսի միջավայր, որտեղ աշակերտը զգա բանակի շունչը, զանազան միջոցներով պետք է ապահովել այս մթնոլորտը, օրինակ հայրենասիրական թեմաներով տարբեր քննարկումներ կազմակերպել այս նոր պատերազմի կենդանի հերոսների հետ, որի ժամանակ աշակերտներին հերոսական դրվագներից կպատմեն և կոգևորեն աշակերտներին:
2. Անհրաժեշտ է կազմակերպել մրցույթներ ֆիզիկական պատրաստվածության շրջանակներում, քանի որ երբ աշակերտները մրցելու հնարավորություն են ունենում, նրանց մոտ ավելիին ձգտելու, հաղթելու, առաջինը լինելու մղումներ են արթնանում, որն էլ մարտական ոգու գրավականն է:
3. Ֆիզիկական պատրաստվածության շրջանակներում մրցույթներ կազմակերպելուց բացի անհրաժեշտ է կազմակերպել նաև տրամաբանական-ինտելեկտուալ խաղեր՝ աշակերտներին գիտելիքներով զինելու նպատակով:
4. ՆԶՊ դասընթացների արդյունավետության հիմնական երաշխիքը դասավանդող մասնագետներն են, որոնք համապատասխան գիտելիքներ ու փորձ ունենալու

դեպքում կարող են ապահովել մեր վաղվա սերնդի ռազմահայրենասիրական դաստիարակության բարձր մակարդակը:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Տեսական և հետազոտական աշխատանքների արդյունքում հանգել ենք հետևյալ եզրակացությունների.

1. Հիմնական դպրոցում ռազմահայրենասիրական դաստիարակության գործընթացում մեր կողմից բացահայտված հիմնախնդիրներն են.

- ռազմահայրենասիրական դաստիարկությանն ուղղված աշխատանքների տարեկան պլանի/ծրագրի բացակայությունը կամ առկայության դեպքում դրանցում համակարգայնության, համալիրության, հաջորդականության բացակայությունը,
- ՆԶՊ ուսուցիչների մանկավարժական, մեթոդական պատրաստվածության թույլ մակարդակը, դասագործընթացում նրանց կողմից փոխներգործուն մեթոդների, ուսուցման տեխնոլոգիաների բացակայությունը, հիմնականում տեսական գիտելիքների վրա շեշտադրումը,
- աշակերտների՝ ռազմահայրենասիրական ոլորտի գիտելիքների, ինչպես նաև զինվորական ծառայությանը պատրաստակամության ցածր մակարդակը,
- աշակերտների թյուր պատկերացումը, որ ռազմահայրենասիրական դաստիարակության հիմնական առարկան ՆԶՊ-ն է:

2. Ուսումնասիրելով և համադրելով հիմնական դպրոցում ռազմահայրենասիարկան դաստիարակության միջազգային փորձը՝ կարող ենք փաստել մի քանի իրողություններ, որոնք կարելի է ներդնել նաև ՀՀ-ում.

- արտերկրի փորձը ցույց է տալիս, որ հիմնական դպրոցում աշակերտների ռազմահայրենասիրական դաստիարակության գործընթացում խիստ կարևոր է նաև հոգևոր դաստիարակությունը, որը նպատակ ունի բարձրացնել աշակերտների մարտունակ ու քաջ ոգին,

3. Առաջարկում ենք հիմնական դպրոցում ռազմահայրենասիրական դաստիարակության հիմնախնդիրների լուծման մանկավարժական հետևյալ ուղիները.

    - ՆԶՊ առարկայի դասագործընթացում կիրառել փոխներգործուն մեթոդներ, որոնք հնարավորություն կտան գիտելիքներ հաղորդելուց զատ ձևավորել համապատասխան կարողություններ, հմտություններ, ակտիվացնել սովորողին,
    - կազմել ռազմահայրենասիրական դաստիարակությանն ուղղված տարեկան պլան, հստակեցնել նպատակը, խնդիրները, յուրաքանչյուր խնդրին ուղված գործողությունները, պատասխանատուներին, ժամկետները, վերջնարդյունքները,

- ՆԶՊ ուսուցիչների մանկավարժական, մեթոդական պատրաստվածության բարձրացման նպատակով կազմակերպել վերապատրաստումներ,
- ռազմագիտական գիտելիքների հաղորդման, կարողությունների, հմտությունների ձևավորմանը զուգահեռ իրականացնել աշխատանքներ սովորողների՝ զինվորական ծառայությանը հոգեբանական պատրաստության ուղղությամբ,
- ձևավորել հետաքրքրություն զինվորականի մասնագիտության նկատմամբ,
- վերոնշյալ ուղղությունների իրագործմանը ծառայեցնել նաև հայոց պատմություն, հայ գրականություն և հանրակրթական մյուս առարկաների ներուժը, մասնավորապես՝ հայրենաճանաչության, հայրենասիրության ձևավորման, ազգային արժեքների յուրացման ուղղությամբ:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Անդրեասյան Հ.Պ., Ռազմահայրենասիրական դաստիարակությունը դպրոցում, -Եր., «Լույս», 1982, 122 էջ:
2. Սարգսյան Ա.Վ., Զինվորական դաստիարակության հարցերը, արտասահմանյան երկրներում, -Եր., 2002թ. 35 էջ:
3. Սիմոնյան Ց.Ռ., Հայ մանկավարժության պատմություն, -Եր. 1998թ. Էջ 67:
4. Կրթությունը Հայաստանում անցումային շրջանում, -Եր. Երևանի համալսարան, 2000թ, էջ 25:
5. Ռազմական հոգեբանության հիմնախնդիրները, հանր. գիտաժող., -Եր., 2013, 278 էջ:
6. Կոզիրով Ֆ.Ֆ., Երեխաները մեծանում են հայրենասերներ, -Եր., «Լույս», 1975, 220 էջ:
7. Մուրադյան.Վ.Ա., Ռազմահայրենասիրական դաստիարակության իրականացման հիմնական ուղղությունները հանրակրթական դպրոցում: Հանրապետական գիտական նստաշրջանի նյութեր: 2010թ. էջ 403-406:
8. Մուրադյան Վ.Ա., Ռազմահայրենասիրական դաստիարակության համակարգը հանրակրթական դպրոցում, Հանրակրթական գիտական նստաշրջանի նյութեր, 2011թ, էջ 416-419: